

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՆՆԵՐՈՒՄ
ԱՌԿԱ «ԹԸՐՊԱՆ» ԲԱՌԱՆՎԱՆ ՇՈՒՐՋ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Ա. Ա.

Հայերենի բարբառներում «գերանդի» գործիքանիշ հասկացությունը գրանցվել է մի քանի բառային տարբերակներով, այդ թվում՝ թըրպան // թըրփան բառանվամբ՝ իր հնչյունական զուգաբանություններով:

Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերում բառանունը գրանցվել է հայերենի բարբառների 15 խոսվածքում: Թըրպան // թըրփան ձևն արձանագրվել է Պոլսի (1՝ Ռոդոսթո), Խարբերդ-Երզնկայի (1՝ Հաբուս), Մուշի (2՝ Լիզ, Քոշկ), Վանի (1՝ Նոր գեղ), Կարինի (1՝ Ջուլդա, Ծղալթբիլա /Վրաստան/), Դիադինի (1՝ Ջուջան), Բայազետի (1՝ Արծափ), Խոյի (2՝ Կարակըզ, Բադիլբո /Էրան/) բարբառների որոշ խոսվածքներում: Օրդուի (2՝ Օրդու, Չիբլուխու) և Համշենի (1՝ Օրմոնքոյ) բարբառների որոշ խոսվածքներում արձանագրվել է թըրպոն հնչաձևը: Եզակի ձևեր են գրանցվել Վանի Գոմս (թըրբփան) և Մարմետ ու Պոդանց (թըրբմփան) գյուղերի խոսվածքներում:

Անկասկած, բառանունը փոխառյալ է թուրքերեն *tırpan* «մանգաղ, գերանդի» բառից¹: Ինչ վերաբերում է թուրքերենի փոխառության աղբյուրին, ապա թուրքերենի ստուգաբանական բառարանի հեղինակ Ս. Նշանյանը իր գրքի համացանցային տարբերակում նշում է, որ այն ծագում է հունարեն *δρέπανον* «մանգաղ» ձևից²: Հունարեն ձևն առկա է բազմաթիվ լեզուների մի շարք բառակազմություններում, որոնք այս կամ այն կերպ առնչվում են մանգաղ և գերանդի անվանումներին: Մանգաղի ձև ունենալու պատճառով Դրեպանա (այժմ՝ Թրապանի) է կոչվել Սիցիլիա կղզու ավերված քաղաքներից մեկը. համաշխարհային պատմության մեջ հայտնի է Ք.Մ.ա. 249 թ. Դրեպանայի պատերազմը Կարթագենի և Հռոմի միջև:

Մովսես Կադանկատուացին նշել է. «Եւ եթէ զլուսին ածից քեզ յօրինակ, յոյժ ծիծաղելի է իմաստնոց. երկոտասան անգամ ի տարւոջն վիժած, ժանգաւոծ, մանգաղաձև, կիսագունդ...»³: Այստեղ գործածված մանգաղաձև բառի թարգմանական համարժեքը որոշ լեզուներում սերում է հենց հունական ձևից՝ *drepanoform*, *drepani-form*,

¹ *Տե՛ս Համարում բառարան տաճկերէն-հայերէն, Յօրինելալ ի Հ. Յակովբոս Վ. Պոզաճեան, Վիեննա, 1858, էջ 240, Турецко-русский словарь, составил Магазаник Д. А. М., 1945, с. 623.*

² *Տե՛ս <http://www.nisanyansozluk.com/?k=t%C4%B1rpan>*

³ **Մովսէս Կադանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, ԺԱ («Թուղթ Գիտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ»):

drepanoid: Օրինակ՝ Հ. Չագմագճյանի «Անգլերեն-հայերեն ընդարձակ բառարանում» առկա են մանգաղաձև, գերանդակերպ թարգմանված drepani-form, drepanoid բառերը⁴: Նույն էջում նշված է նաև drepanium բառը, որ թարգմանված է՝ գերանդիկ, նաև՝ մանգաղաձև ծաղկեփունջ:

Հունարեն ձևից են ծագում բուսական և կենդանական աշխարհի մի շարք անվանումներ: Դրանցից մեկը՝ *δρεπανίς* բառը՝ որպես թռչնանուն, որ առկա է Բարսեղ Կեսարացու երկում, հայերեն թարգմանությամբ վկայված է դեռևս V դ.՝ մաքալուկ. «Քանզի ոչ ի գնացս ինչ բազում վայրաց տուեալք են ոտք եւ ոչ ի պէտս որ-սոյ, որպէս ծիծառանց եւ այլոց թռչնոց, որ անուանեալ կոչին մաքալուկք, որք յաւոյց գմանրամաղ իրս ինչ թռուցեալ բերեն ի դարման իւրեանց պիտոյից, եւ ծիծառան...»⁵: Թեև Հ. Աճառյանը չի տալիս բառանվան ստուգաբանությունը, բայց նշելով, որ հունարեն բնագրային բառաձևը ծագում է հունարեն *δρέπανον* «մանգաղ» ձևից, հավելում է, թե «արդեօք հայ բառն էլ պէտք է հասկանալ մանգաղով»⁶: Լ. Հովհաննիսյանը գտնում է, որ բառը կազմված է մանգաղ բառից և -ուկ ձևովից⁷: Ջ. Գրեպինը ինչպես այս, այնպես էլ մանգղաթև // մանկղաթև անունները կրող թռչնատեսակներն ընդգրկում է ջրածիծառների (swifts) ընտանիքում⁸: Ի դեպ, Բարսեղ Կեսարացու երկի անգլերեն, գերմաներեն և ռուսերեն թարգմանություններում *δρεπανίς* բառը թարգմանվել է համապատասխանաբար՝ swifts⁹ «ջրածիծառներ», mauerschwalben¹⁰ «քարածիծառ», щурки¹¹, щур «ջրածիծառ» բառից¹², իսկ ֆրանսերենում բառը համա-

⁴ Տե՛ս Ընդարձակ բառարան անգլերեն-հայերեն, աշխատասիրեց՝ Չագմագճեան Թ. Թ., Պէյրուի (առանց թվագրման), էջ 456:

⁵ Բարսեղ Կեսարացի, *Յաղագս Վեցաւրեայ արարչութեան*, աշխ. Կ. Մուրադյանի, Ե., 1984, Ճառ Ը, էջ 257-258:

⁶ Աճառյան Հր., *Հայերեն արմատական բառարան*, հ. Գ, Ե., 1977, էջ 290-291:

⁷ Հովհաննիսյան Լ. Շ., *Բառաքնական դիտարկումներ (Պատմա-բանասիրական հանդես, 1989, N 3, էջ 157)*:

⁸ Տե՛ս *Classical and Middle Armenian Bird Names: A Linguistic, Taxonomic, and Mythological Study*, by Greppin John A. C. Delmar, New York, 1978, p. 160.

⁹ Տե՛ս Basil, *Letters and Selected Works (Nicene and Post-Nicene Fathers, vol. 8, Second Series)*, Peabody, Mass., 1995, p. 96.

¹⁰ Basilius der Große. *Ausgewählte Schriften, Band 2: Ausgewählte Homilien und Pedigten: Homilien über das Hexaemeron (=Bibliothek der Kirchenväter, 1. Reihe, Band 47)*, Kösel, 1925, p. 126 (474):

¹¹ Творения иже во святых отца нашего Василия Великаго, Архиепископа Кесарии Каппадокийския. ч. 1, М., 1891 (Беседы на Шестоднев. Беседа 8, О птицах).

¹² Фасмер М. *Этимологический словарь русского языка, в 4-х тт., т. 4 (Т-ящур)*, пер. с нем. и доп. Трубачева О. Н., М., 1987, с. 510.

պատասխանեցվել է բնագրային տարբերակին՝ *drépanes*¹³: Փաստորեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն թարգմանություններում բառն իր կազմում չի պարունակում տվյալ լեզվում գործածվող գործիքանիշ (համապատասխանաբար՝ *sickle* կամ *scythe*, *faucille* կամ *faux*, *sichel* կամ *sense*, *серп* կամ *коча*) բառաձևը, մինչդեռ հայերենում երկու դեպքում էլ առկա է մանգաղ գործիքանիշ բա- որ: Պետք է նշել, որ հունարեն տարբերակն առաջին անգամ վկա- յել է Արիստոտելը իր «Կենդանիների կյանքը» գրքում¹⁴: Հետաքրքիր է, որ այդ գրքի անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն ժամանակակից թարգմանություններում տվյալ բառը ոչ թե թարգման- վել է, այլ համապատասխանեցվել է բնագրային տարբերակին (անգլերենում և ֆրանսերենում՝ *drepanis*, ռուսերենում՝ *дрепанида*)¹⁵, թեև XVIII դ. ֆրանսերեն մի թարգմանությունում տվյալ բառը թարգմանվել է *martinet* «ջրածիծառ»¹⁶: Ցավոք, Արիստոտելի այդ աշխատությունը ո՛չ միջնադարում և ո՛չ էլ դրանից հետո հայերեն չի թարգմանվել:

Ինչպես նշվեց, հունարեն *δρέπανον* բառից են սերում բուսական ու կենդանական աշխարհի և այլ ոլորտների մի շարք անվանումներ: Ահա դրանցից մի քանիսը՝

Drepana falcatoria – թիթեռի տեսակ, որ ֆրանսերեն անվանվում է *La faucille* «մանգաղ», իսկ գերմաներեն՝ *Heller Sichelflügler* (երկրորդ բառը՝ «մանգաղաթև») (կարելի է թարգմանել «մանգաղաթիթեռ»),

Drepanocladus uncinatus – մամուռի տեսակ, որ անգլերեն անվանվում է *Sickle Moss* (կարելի է թարգմանել «մանգաղամամուռ»), գերմաներեն՝ *Bärlapp-Sichelmoos* («գետնա-մամուռ-մանգաղամամուռ»),

Drepanophycus – ֆիկուսի տեսակ (կարելի է թարգմանել «գերանդաֆիկուս» կամ «մանգաղաֆիկուս»),

Drepanostachyum – բամբուկազգիների ընտանիքի բույս (կարելի է թարգմանել «մանգաղաբամբուկ»),

¹³ **Basile de Césarée**, *Homélies sur l'Hexaéméron, ou l'Ouvrage des six jours* (*Homélies, discours et lettres choisis de S. Basile-le-Grand*, traduits par M. l'Abbé Auger, Lyon, 1827, p. 492).

¹⁴ **Aristotle**. *Historia Animalium: Text, Volume 1, Books 1–10* (D.M.Balme, prepared for publication by Allan Gotthelf), Cambridge, 2002 (=Cambridge Classical Texts and Commentaries, 38), p. 57.

¹⁵ **Aristotle**. *Historia Animalium*, in 3 vol., I, Books 1–3, with an English Translation by A.L.Peck (=The Loeb Classical Library, 437), Cambridge, Massachusetts, London, 1965, p. 13, **Aristotle's History of Animals**, London, 2005 (Elibron Classics series), p. 4, **Aristote**, *Histoire des animaux*, Nouvelle traduction, avec introduction, notes et index par J. Tricot, Paris, 1987, p. 66, **Аристотель**. *История животных* (пер. с древнегреч. В. П. Карпова, под ред. и с примеч. Старостина Б. А., М., 1996, кн. 1, гл. 1, (10, с. 74).

¹⁶ *St' u Histoire des animaux d'Aristote*, avec la traduction française, par M. A.-G.Camus, tome premier, Paris, 1783, p. 9.

Drepanophylla – «գերանդատերև», մի քանի տեսակի է՝ ըստ բուսաբանության՝ Eucalyptus (նիվենի) Drepanophylla, Aloe (հալվե) Drepanophylla, Acacia (ակացիա) Drepanophylla և այլն,

Drepanocytose – արյան հիվանդության տեսակ (կարելի է թարգմանել «մանգաղաբջիջ»), որ ռուսերեն թարգմանվում է՝ серповидно-клеточная анемия, անգլերեն՝ sickle-cell disease կամ sickle-cell anaemia, ֆրանսերեն՝ sicklémie կամ anémie à cellules falciformes, գերմաներեն՝ Sichelzellanämie (հետաքրքիր է, որ նշված բոլոր լեզուներում էլ հիվանդության անվանման մեջ առկա է «մանգաղ» գործիքանիշ բառը):

Չնայած նշված օտար բառերի առկայությանը՝ հայերենի ժամանակակից բառարաններում դրանք կամ դրանց հայկական համարժեքներն ընդգրկված չեն: Հայերենի՝ հնում հրատարակված բառարանների մեծ մասը նույնպես չունի այդ բառերի մասին վկայություններ:

Գ. Լուսինյանի «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ» բառարանի 1909 թ. հրատարակությունում նշվում են քննարկվող բառով կազմված մի շարք օտար բառեր, և տրվում են դրանց հայերեն համարժեքները՝ Drépanis «ափնածիծառն», Drépanitinos «ափնածիծառնագիթ», Drépanocarpe «գերանդապտուղ» (թիթեռնածաղկեայց սեռ), Drépanocère «գերանդեղջիւր» (հնգայոդ պատենաթեւից սեռ), Drépanophore «գերանդակիր, գերանդազեն», Drépanophylle «գերանդատերև» (հերձատամնեայց սեռ), Drépanostome «գերանդաբերան», Drépanoptéryx «գերանդա...»¹⁷: Այս բառի թարգմանությունը թերի է (ըստ երևույթին, հաջորդ տողը չի տպագրվել): Այդ բառանվամբ է կոչվում միջատների դասին պատկանող մի կենդանի, որը միգուցե բառարանի հեղինակը թարգմանել էր «գերանդաթիռ»:

Պետք է ցավով նշել, որ դրանից հետո հայերենի մեզ հայտնի ոչ մի բառարան այս բառերի մեծ մասը չի ընդգրկել իր բառակազմում: Մինչդեռ նշված գերանդապտուղ, գերանդեղջյուր, գերանդատերև, գերանդաբերան, գերանդաթիռ բառերը կարող էին հարստացնել հայերենի բառամթերքը: Ժամանակակից հայերենի բառապաշարում կարելի է ընդգրկել նաև հետևյալ նոր բառերը՝ մանգաղաթի-թեռ (Drepana falcataria), մանգաղամամուռ (Drepanocladus uncinatus), մանգաղաֆիկուս (Drepanophycus), մանգաղաբամբուկ (Drepanostachyum), մանգաղաբջջի հիվանդություն (Drepanocytose):

¹⁷ Լուսինյան Գ., Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ, հ. Ա, Կ. Պոլիս, 1909, էջ 767:

К ВОПРОСУ О НАИМЕНОВАНИИ “ԴՐՔԱՆ” В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

АБРАМЯН А. А.

Резюме

В армянских диалектах понятие “коса” (обозначающее орудие труда) употребляется в нескольких словесных вариантах, в том числе под названием **t’ərpan** // **t’ərp’an**. Это название в материалах “Диалектологического атласа армянского языка” зафиксировано примерно в 15 говорах армянских диалектов и в основном охватывает диалекты западных группировок. Безусловно, название восходит к турецкому слову *tırap*, заимствованному из греческого. Что касается источника заимствования в турецком, то он восходит к греческой форме *δρέπανον*. Греческая форма этого слова присутствует в ряде словообразований многих языков, которые в той или иной мере относятся к наименованиям *manga* и *gerandi*. Несмотря на это, в современных словарях армянского языка эти слова или их эквиваленты не зафиксированы. Даже армянские эквиваленты ряда иноязычных слов, образованных от рассматриваемого слова, зафиксированные во французско-армянском словаре Г. Лусиняна 1909 года (*gerandaptu* /*Drépanocarpe*/, *gerandəjyur* /*Drépanocère*/, *gerandaterew* /*Drépanophylle*/, *gerandaberan* /*Drépanostome*/, *gerandat’ir* /*Drépanoptéryx*/), также не охвачены в словарях современного армянского языка. Между тем вышеотмеченные слова, а также ряд новых слов *mangalat’it’er* /*Drepana falcatoria*/, *mangalamamur* /*Drepanocladus uncinatus*/, *mangalafikus* /*Drepanophycus*/, *mangalabambuk* /*Drepanostachyum*/, *mangalabjji hiwandut’yun* /*Drepanocytose*/ могли бы обогатить словарный запас современного армянского языка.